ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2021թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Մարզպետի և մարզպետարանի ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկում.

2021 թվականին մարզպետների մասնակցությամբ տեղի է ունեցել 6 մամուլի ասուլիս:

2021թ հունվարի 21-ին տեղի է ունեցել Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանի մամուլի ասուլիսը' մարզպետ նշանակվելու կապակցությամբ:

Ապրիլի 6-ին՝ մարզային խորհրդի 2021թ. թվականի առաջին նիստից հետո, Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանը պատասխանել է լրագրողների հարցերին:

2021թ. մայիսի 12-ին Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանը հանդես է եկել աշխատանքային 100 օրերն ամփոփող ասուլիսով:

2021թ. հուլիսի 16-ին կայացած մարզխորհրդի նիստի ավարտին Շիրակի մարզպետը պատասխանել է մարզում գործող լրատվամիջոցների ներկայացուցիչների հարցերին:

2021թ. նոյեմբերի 4-ին Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանը հրաժեշտի ասուլիս է անցկացրել լրատվամիջոցների հետ:

2021թ. նոյեմբերի 11-ին՝ աշխատանքային առաջին օրը, Շիրակի մարզպետ Նազելի Բաղդասարյանը հանդիպել է ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ, պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին:

2021թվականի ընթացքում պաշտոնավարող Շիրակի մարզպետները պարբերաբար հարցազրույցներ են տվել տեղական «Հ1», «Ցայգ», «Շանթ» հեռռատաընկերություններին, պատասխանել «Առավոտ», «Արմենպրես», «Սպուտնիկ Արմենիա», «Հայկական ժամանակ», «Հետք», «Ազատություն» կայքերի թղթակիցներին, «Շրջապատ»ճ «Շիրակ» շաբաթաթերթերի լրագրողներին հետաքրքրող հարցերին, հյուրընկալվել «Հ1», «Ցայգ», «Շանթ», «factor.am», «1in.am» հաղորդաշարերին:

Բաժնի կողմից ապահովվել է մարզպետարանի գործունեությանն առնչվող, հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ մարզպետարանի պատասխանատուների հարցազրույցների, ճեպազրույցների, հայտարարությունների կազմակերպումը, մամուլի հաղորդագրությունների, պարզաբանումների և հրապարակումների, այլ տեղեկանքների պատրաստումը: 2021 թվականին ամենից շատ անդրադարձ է կատարվել կորոնավիրուսի, պատվաստումների թվային տվյալներին, քաղաքաշինական հիմնախնդիրներին, գյուղատնտեսության բնագավառի հիմնահարցերին, կրթական ու մարզական ձեռքբերումներին:

Ամենօրյա աշխատանքային կարգով ուսումնասիրվել ու վերլուծվել է մարզպետարանիի գործունեությանը վերաբերող զանգվածային լրատվության միջոցների նյութերը,

անհրաժեշտության դեպքում տեղեկացվել է մարզպետին և ոլորտային պատասխանատուներին, ապահովվել է ՁԼՄ հրապարակումների օպերատիվ արձագանքը:
Հանրային իրազեկման նպատակով մշտապես մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերի մասնակցությամբ կազմակերպվել են հարցազրույցներ ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ:
Մարզում գործունեություն ծավալող ՁԼՄ բոլոր ներկայացուցիչները պատշաճ ժամկետներում մշտապես տեղեկացվել են մարզպետարանի և նրա ենթակայության տակ գտնվող հաստատություններում տեղի ունեցած այն միջոցառումների մասին, որոնք ենթակա են եղել լուսաբանման:
Մարզպետարանի պաշտոնական կայքէջում նախապես տեղադրվել են մարզային խորհուրդների նիստերի անցկացման օրակարգերի նախագծերը, ՁԼՄ-ները նախօրոք տեղեկացվել են նիստերի անցկացման օրվա և ժամի մասին և լուսաբանվել են անցկացված մարզխորհրդի բոլոր նիստերը, նիստերի արձանագրությունները տեղադրվել են կայքէջում:
Մարզպետարանի կայքէջում սահմանված ժամկետներում և ամբողջությամբ տեղադրվել են 2021 թվականի անցած ամիսներին մարզպետի կողմից ընդունված բոլոր 449 որոշումները, տեղադրվել են նաև համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները:
Պարբերաբար կատարվել է մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից իրենց ոլորտին առնչվող տեղեկատվության հավաքագրում, նախապատրաստում և մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրում:
2021 թվականի հաշվետու ժամանակահատվածում մարզպետի և մարզպետարանի աշխատակիցների կողմից պատասխանվել են լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ստացված բոլոր գրավոր հարցումներին (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով ստացված):
ՀՀ միգրացիոն պետական ծառայություն պարբերաբար ուղարկվել են Շիրակի մարզի համայնքների այն բնակիչների անձնական տվայլները, որոնք դիմել են ՌԴ տարածք մուտք գործելու արգելափակման վերանայման հարցով:

2. Մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության կազմակերպում.
ՀՀ Շիրակի մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելության գործընթացն ամբողջությամբ իրականացվել է «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետի և ՀՀ Շիրակի մարզպետի 2008 թվականի հուլիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 187 որոշմամբ սահմանված կարգի դրույթներին համապատասխան:
2021 թվականին ՀՀ Շիրակի մարզպետի և մարզպետի տեղակալի մոտ կազմակերպվել և անցկացվել են քաղաքացիների թվով ութ ընդունելություններ:

Քաղաքացիների ընդունելություններն անցկացվել են ինչպես նախատեսված օրերին և ժամերին, այնպես էլ արտահերթ՝ անհրաժեշտության դեպքում: Քաղաքացիների ընդունելությունների ընթացքում բարձրացված հարցերը վերաբերվել են բնակարանային, զբաղվածության, առողջապահական խնդիրներին, ինչպես նաև սոցիալական աջակցության տրամադրմանը:

Յուրաքանչյուր ամիս ՀՀ վարչապետի աշխատակազմ տեղեկատվություն է տրամադրվել նախորդ ամսին քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների, առաջարկությունների, հանրագրերի, քաղաքացիների ընդունելության վերաբերյալ:

3. Արտաքին կապերի ոլորտում կազմակերպվել են Շիրակի մարզպետի հանդիպումները

ՀՀ–ում Նիդերլանդների Թագավորության, Ճապոնիայի, Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության, Բելառուսի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության, Արգենտինայի, ԱՄՆ–ի, Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպանների, Եվրամիության ներկայացուցիչների, Գյումրիում ՌԴ պատվո հյուպատոսի հետ, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից անցկացված միջոցառումներին մասնակցությունը: Մասնակցություն է եղել հայ-ռուսական միջտարածաշրջանային 8-րդ ֆորումի աշխատանքներրին, Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության կողմից կազմակերպված ցուցահանդեսին: Պատրաստվել են գրություններ, թարգմանություններ: Կազմակերպվել են մարզպետի հանդիպումները մարզում գործող այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Արաքսյա Կիրակոսյան